

Ժան եւ Ալբերտ Պողոսյան Jean and Albert Boghossian
**Նորարար փորձառական արվեստի կենտրոն**
**armenian center for contemporary experimental art**
Փավստոս Բուզանդի 1/3. Հեռ.: 568225, 568325
info@accea.info, www.accea.info

# ԵՐԲ ԽԶԲԶՈՑՆԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՉԽԶԲԶՈՑ
# WHEN SCRABBLES ARE UN-SCRABBLED

Նոր տաղանդ նախագիծ I New Talent Project

**Նոյեմբեր 17 November , 2015 - Հունվար 30 January, 2016**

**Համադրող` Արփա Հակոբյան**
**Curator: Arpa Hacopian**



Լիլիթ Մարկոսյան Lilit Markosian

-Նկարում եմ ինչ իմ ներաշխարհն է ինձ թելադրում:Հաճախ նկարում եմ փոքրիկ թղթի կտորների վրա, դրանք փոքրիկ պատգամներ են:

Համարձակ ու միևնույն ժամանակ շատ ուշադիր յուրաքնաչյուր գծի նկատմամբ: Սպոնտան և ազատ գծերով արված նկարներ: Փոքրիկ գունազարդ թղթիկնեից մեծ հեքիաթ:

*I paint whatever my inner world tells me.I often draw on small pieces of paper. These are small commandments.*

Daring and simultaneously very attentive of every single line. Paintings of spontaneous and free lines. Big tale made of small colored papers



Արփենիկ Մուրադյան Arpenik Muradyan

-Ցանկացած պահի էլ կարող եմ նկարել, ինձ միայն թուղթ ու գրիչ է անհրաժեշտ, տեղը կապ չունի: Հետաքրքիր չի կողքիս ով կա, նկարելուց իրենց չեմ էլ նկատում: Ես գրիչով սկսում, ու ավարտում եմ նկարը, էսկիզներ չեմ անում: Սիմետրիայի հետ «խնդիր» ունեմ:

Համբերատար, մտածված, համաչափ ֆորմաների մեջ՝ ստեղծված աշխատանքներ: Նկարները տանում են հեքիաթային լաբիրինթոսներով լի մի աշխարհ որտեղ քեզ գերազանց ես զգում:

*I can draw anytime, I only need paper and pen, the venue does not matter. I am not interested who is standing next to me. When I draw, I do not even notice them. I start and finish the painting by the pen. I do not make sketches. I have "problem" with symmetry.*

Patiently and thoughtfully created works of proportionate forms. Paintings lead to a world full of illusory labyrinths, where you feel elated.



Թենի Ադամյան Tenny Adamian

-Համակարգչով շատ լավ տիրապետում եմ գրաֆիկական կատարողական արվեստին, բայց ավելի հաճույք եմ ստանում ձեռքով նկարելուց: Գրաֆիկական ոճը ընտրել եմ իմ զգացումները արտահայտելու համար հարազատ ձև: Ինձ համար կարևոր է որ միտքը և գաղափարը լինի իմը:

Եթե գիտես որ կարող ես անել ավելի լավ, ուրեմն պետք չէ ներկայացնել վատը: Համոզված ու բծախնդիր, մանրամասն հաշվարկված՝ կարգապահ անհատականություն: Այստեղ ներկայացված են իր գրաֆիկական և լուսանկրչական աշխատանքները:

*I master the art of computer graphics, but I still enjoy drawing by hand, more. I have chosen graphics for expressing my intimate feelings. For me it is important that the thought and the idea are mine.*

If you can do better, then you do not need to do the inferior work. A convinced and meticulous personality, endowed by closely worked out discipline. The exhibition contains her graphic and photographic works.



Ալեքս Թարվերդի Alex Tarverdi

-Ուզում եմ սևը և մթությունը ցույց տալ. թաքնված դիմակի տակ: Սա խաղ է իրական աշխարհից: Շատ ազդված եմ համակարգչային խաղերից, ես ինձ այնտեղ լավ եմ զգում:

Ալեքսի լուսանկարներում կա մթի-լույսի, հասկանալի ու անհասկանալի կերպար, որը մի քանի անագմ նայելով յուրովի ընկալում է պահանջում: հանելուկային ու առեղծվածային մոտեցում:

*I want to show the black and the darkness, hidden under the mask. This is a game from the real world. I am very impressed by the computer games. There, I feel good.*

In Alex's photographs there are images of light and dark, the comprehensible and not comprehensible, which require peculiar perception. An enigmatic and puzzle approach.



Սվետլանա Խաչատրյան Svetlana Khachatryan

-Գույն շատ շատ եմ սիրում: Նկարելուց փորձում եմ նախ զգալ ինքս իմ մաշկի վրա: Պիտի լինեմ հարյուր տոկոս անկեղծ որ կարողանամ նկարել: Բայց դա միշտ չի որ ստացվում է: Ու եթե չի ստացվում չեմ նկարում: Կոնկրետ՛ զգացողության վրա արված նկարներ են: Կտավներս իմ ներաշխարհն են: Լուսավոր հանգիստ բնավորությամբ մարդ: Շատ հստակ գիտի թէ ինչ է նկարելու ու միանգամից կտավին է հանձնում կայնքից զգացած, վերցրած ստվերները:

*I love colors very much. When painting I first try to feel it on my own skin. I need to be totally honest to be able to paint. However, it does not always happen. And if it does not happen I do not paint. These are paintings done on the basis of sensitivities. My canvases are my inner world.*

A person of bright and quiet nature. She is distinctly aware of what she wants to draw, and directly passes the shades sensed and taken from life to the canvas:.



Վարդան Գ. Աստվածատրյան **Vardan G. Astvatsatryan**

Լուսանկարչության հանդեպ սերս ժառանգել եմ պապիկիցս: Հիշում եմ երբ նա նկարում էր արդեն մեզ համար շատ հին խցիկներով, ու տպում էր մութ սենյակում: Ես էլ սկսել եմ նկարել սովետական ֆոտոխցիկով: Լուսանկարչությունը ինձ համար հոբբի է: Ճարտարապետությունը ինձ օգնեց ավելի հստակեցնեմ կադրերս և էստետիկական գրագետ լուսանկարներ անեմ: Ճարտարապետի աչքով, լուսանկարներ մեր քաղաքի թաքնված անկյուններից: Գունային գամաների և կոմպոզիցիայի հետաքրքիր համադրություն:

*I have inherited love of photography from my grandfather. I remember that he photographed for us by very old cameras and printed them in a dark room. I too started photographing by a soviet photo camera. For me photography is a hobby. Architecture helped me to further sharpen the frames and make aesthetically I ntelligent photographs.*

Photographs of hidden corners of our city from an architect's viewpoint. Interesting combination of compositions and color arrays.